

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
№ 61/09**

**Քաղ. Երևան**

**29 մայիսի 2009թ.**

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Գ.Յ.Ադամյան, Բ.Շ.Վարդանյան, Ա.Վ.Բաբայան և Լ.Ե.Ասցատրյան (քարտուղար), իր 2009թ. մայիսի 29-ի նիստում (արձանագրություն № 70/4) քննարկեց «Գրանդ Զենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2009թ. ապրիլի 21-ի բողոքը Joint-Stock Company «Krasnyj Oktyabr» ընկերության անունով «КРАСНАЯ ШАПОЧКА» IR634407 միջազգային գրանցմամբ համակցված ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու ինդրանքով:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը՝ «Գրանդ Զենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն), որն հանդիսանում է ավելի վաղ առաջնությամբ գրանցված դ7560 КРАСНАЯ ШАПОЧКА (գրանցված 2003թ. հոկտեմբերի 14-ին) համակցված և դ 8656 КРАСНАЯ ШАПОЧКА (գրանցված 2004թ. հոկտեմբերի 22-ին) բառային ապրանքային նշանների սեփականատերը, հայտնում է, որ 2004թ. հոկտեմբերի 29-ին Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ) ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը (այսուհետ՝ նաև Գործակալություն) ծանուցել է ԱՃՄԴ 30 դասի «բաղցրավենիքներ» ապրանքների համար КРАСНАЯ ШАПОЧКА համակցված ապրանքային նշանի գրանցման գործողության տարածման մասին՝ (IR 634407, սեփականատեր՝ Joint Stock Company «Krasnyj Oktyabr»), որի գրանցման մասին հրապարակվել է 2004/41 Gaz, 06.01.2005թ.:

Ինչպես բողոքում նշել է բողոքարկողը, արդյունքում ստացվել է, որ ՀՀ-ում նույն ապրանքային նշանը իրավական պահպանություն է ստացել և գրանցվել երկու տարբեր իրավական անձանց անունով, ինչը հակասում է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներին:

Այսպես, բողոքարկողը գտնում է, որ Օրենքի 1-ին հոդվածի համաձայն «Ապրանքային և սպասարկման նշանները այն նշաններն են, որոնցով որևէ անձի ապրանքները և ծառայությունները համապատասխանաբար տարբերվում են այլ անձանց նույնատիպ ապրանքներից և ծառայություններից», հետևաբար բողոքարկողը համարում է, որ նույն ապրանքային նշանը չի կարող ունենալ երկու

տարբեր սեփականատեր: Նրա կարծիքով ՀՀ-ում «КРАШАЯ ШАПОЧКА» IR634407 ապրանքային նշանի գրանցված լինելու փաստը խախտում է Ընկերության բացառիկ իրավունքը, քանի որ Օրենքի 4-րդ հոդվածի դրույթների համաձայն «Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է դրան իրավական պահպանություն տրամադրելու պահից և պատկանում է դրա սեփականատիրոջը: Ապրանքային նշանի սեփականատերն ունի այն տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու, ինչպես նաև այլ անձանց կողմից դրա օգտագործումն արգելելու բացառիկ իրավունք: Առանց ապրանքային նշանի սեփականատիրոջ թույլտվության ոչ ոք իրավունք չունի օգտագործել Հայաստանի Հանրապետությունում պահպանվող ապրանքային նշանը»:

Ինչպես նշել է բողոքարկողը, ՀՀ-ում «КРАШАЯ ШАПОЧКА» IR634407 ապրանքային նշանի գրանցումը չի համապատասխանում գրանցման պահանջներին, այն է՝ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն, «որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված (եթե դրանց հայտերը հետ կանչված կամ մերժված չեն) ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին, կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններին», տվյալ դեպքում, «Գրանդ Քենդի» հայկանադական ՀԶ ՍՊԸ-ի անունով գրանցված ավելի վաղ առաջնությամբ դ7560 КРАШАЯ ШАПОЧКА համակցված և դ 8656 КРАШАЯ ШАПОЧКА բառային ապրանքային նշաններին:

Իր պնդումը հիմնավորելու և Միջազգային գրանցման գործողություն ունեցող «КРАШАЯ ШАПОЧКА» IR634407 համակցված ապրանքային նշանի և Ընկերության անունով գրանցված դ7560 КРАШАЯ ШАПОЧКА (համակցված) և դ8656 КРАШАЯ ШАПОЧКА (բառային) ապրանքային նշանների շփոթելու աստիճան նման լինելու փաստը ապացուցելու համար բողոքարկողը՝ առաջնորդվելով «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 92-րդ, 96-105-րդ կետերի պահանջներով, համեմատել է նշանները ինչպես համակցված նշանների հետ, այդպես էլ նշանների այն տեսակների հետ, որոնք որպես տարրեր ներառված են համակցված նշանի մեջ: Կարգի 105<sup>1</sup>-րդ կետի համաձայն համակցված նշանների նմանությունը որոշելիս բողոքարկողը հաշվի է առել դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցը առանձին վերցված, քանի որ դրանց մեջ տվյալ տարրերը հանդիսանում են հիմնական ընկալման կամ տվյալ նշանների այսպես կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ»: Համեմատության արդյունքում պարզվել է, որ համեմատվող նշանները շփոթելու աստիճան նման են, ընդ որում, բողոքարկողը դրանք համարում է ընդհանուր առմամբ զուգորդվող, քանի որ նշանների հիմնական ընկալման տարրերը՝ կիրիլիցայի այբուբենով գրված «կրասնայա շապոչկա» արտահայտությունը և պատկերային տարրերը կատարված են այնպես, որ տեսնելով դրանցից մեկը սպառողի մոտ առաջանում է պատկերացում մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որին ինքն արդեն առնչվել է: Բողոքարկողը նշել է, որ համեմատվող նշաններում կան պատկերային

տարրերի առանձին անկշան տարբերություններ, որոնք, սակայն, էական դեր չեն խաղում նշանների հիմնական ընկալման համար:

Այսպիսով, ելնելով բերված փաստարկներից և հիմք ընդունելով օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը և «ՀՀ մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 2.15-րդ կետը, բողոքարկողը՝ «Գրանդ Զենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ն խնդրել է IR634407 միջազգային գրանցմամբ КРАСНАЯ ШАПОЧКА համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը ճանաչել անվավեր գրանցված ապրանքների համար:

Ի լրումն բողոքի, ընկերությունը 2009թ. մայիսի 11-ին գործակալություն է ներկայացրել դ Ն-88 գրությունը՝ կից փաստաթղթերով:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն 23.04.09թ. հետձանուցմամբ փոստային առաքմամբ տեղեկացրել է «КРАСНАЯ ШАПОЧКА» IR634407 ապրանքային նշանի սեփականատեր Joint-Stock Company «Krasnyj Oktyabr» ընկերության ներկայացուցիչ Ս.Ա.Ռոդինային (Родина С.А. ООО УК "Объединенные кондитеры", Юридический департамент, 115184, МОСКВА, 2-ой Новокузнецкий переулок, д.13/15 РОССИЯ) բողոքարկման խորհրդի կողմից «Գրանդ Զենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2009թ. ապրիլի 21-ի բողոքը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2009թ. մայիսի 29-ը) և վայրի մասին՝ կցելով դիմումի պատճենը: Ըստ գործակալությունում ստացված համապատասխան փոստային ծանուցագրի, հասցեատերը նամակը ստացել էր 04.05.2009թ., սակայն բողոքարկման խորհրդի 2009թ. մայիսի 29-ի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև բողոքարկման խորհուրդը դիմումի վերաբերյալ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցիչից չի ստացել:

Ներկայացված բողոքի քննարկման արդյունքում կոլեգիան պարզել է, որ «Գրանդ Զենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2009թ. ապրիլի 21-ի բողոքում բերված են հիմնավոր փաստարկներ «КРАСНАЯ ШАПОЧКА» IR634407 միջազգային գրանցմամբ և ընկերության ավելի վաղ առաջնությամբ դ7560 КРАСНАЯ ШАПОЧКА և դ 8656 КРАСНАЯ ШАПОЧКА ապրանքային նշանների շփոթության աստիճան նման լինելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է բողոքարկողի 2009թ. մայիսի 11-ին ի լրումն բողոքի Գործակալություն ներկայացված դ Ն-88 գրությանը, ապա ուսումնասիրելով այն, կոլեգիան պարզել է, որ «Գրանդ Զենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ն 2009թ. մարտի 31-ին Գործակալությանը հարցում էր կատարել վերոնշյալ միջազգային գրանցման գործողության մասին: Ի պատասխան այդ գրության Գործակալությունը՝ 2009թ. ապրիլի 20-ի դ26-61 նամակով, դիմողին է տրամադրել IR 634407 միջազգային գրանցմամբ ապրանքային նշանի գրանցման տարածումը ՀՀ-ում մերժելու մասին

Նախնական (2005թ. օգոստոսի 16-ի) և վերջնական (2007օգոստոսի 16-ի) մերժման մասին որոշումների պատճենները և հայտնել, որ այդ որոշումները նշանի սեփականատիրոջ կողմից չեն բողոքարկվել: Կոլեգիան համարում է, որ ըստ էության, գրանցումը մերժված է, բայց փաստացի չի մերժվել անհասկանալի պատճառով, հետևաբար գրանցումը պետք է անվավեր ճանաչվի, քանի որ գրանցման պահին կային հիմքեր, որոնք թույլ չէին տալիս, որ այդ նշանին պահպանություն տրամադրվի:

Բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը և առարկությունները, ինչպես նաև հաշվի առնելով կոլեգիայի կողմից բողոքի և լրացուցիչ պարզաբանումների և փաստարկների ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Բողոքարկման խորհուրդը համաձայնվեց բողոքարկողի այն փաստարկների հետ, որ ՀՀ-ում իրավական պահպանություն ստացած Ռուսաստանյան ընկերության «КРАСНАЯ ШАПОЧКА» IR634407 ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է «Գրանդ Զենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի ավելի վաղ առաջնությամբ դ7560 КРАСНАЯ ШАПОЧКА և դ 8656 КРАСНАЯ ШАПОЧКА նշաններին, և դրանով իսկ խախտվել են օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի պահանջները, և համարում է, որ КРАСНАЯ ШАПОЧКА IR634407 համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը ենթակա է անվավեր ճանաչման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով և կարգի 74-րդ կետի «ա» ենթակետով Բողոքարկման խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Բավարարել «Գրանդ Զենդի» Հայ-Կանադական ՀԶ ՍՊԸ-ի 2009թ. ապրիլի 21-ի բողոքը ամբողջովին և Joint-Stock Company «Krasnyj Oktyabr» ընկերության КРАСНАЯ ШАПОЧКА IR634407 համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը ամբողջությամբ անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքում:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի

Նախագահ

Ա.Ազիզյան